

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1207-Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
նոյեմբերի 14-ի N 1570-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՄԱՈՂՈՒԹՅԱՆ
ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդաբանությամբ և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհա-
նուր նկարագրով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության շուկայի
վերահսկողության տեսչական մարմինն (այսուհետ՝ տեսչական մարմին) վերա-
պահված վերահսկման ենթակա ոլորտներում ռիսկի վրա հիմնված ստուգումների
անցկացման հետ կապված ընդհանուր հարցերը, ինչի արդյունքում ստուգումների
պարբերականությունը պլանավորվելու է, և ստուգումներն իրականացվելու են
համապատասխան իրենց ռիսկայնության խմբի՝ հաշվի առնելով «Հայաստանի
Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
օրենքի պահանջները:

II. ՌԻՍԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

2. Ռիսկը տնտեսավարող սուբյեկտի գործունեության արդյունքում մարդու
կյանքին, առողջությանը, շրջակա միջավայրին, պետության, իրավաբանական և
ֆիզիկական անձանց գույքային շահերին, բնական և էներգետիկ պաշարների
խնայողությանը վնաս հասցնելու հավանականությունն է՝ հաշվի առնելով այդ
վնասի ծանրության աստիճանը:

III. ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3. Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ռիսկը գնահատվում է ոլորտային և անհատական ռիսկերի հանրագումարով, որի առավելագույն միավորը 180 է.

$$R_{\Sigma} = R_n + R_w$$

Որտեղ՝ R_{Σ} - տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր ռիսկ,

R_n - ոլորտային ռիսկ,

R_w - անհատական ռիսկ:

4. Տնտեսավարող սուբյեկտի ռիսկը ցուցանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների:

5. Եթե տնտեսավարող սուբյեկտը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում, ապա հիմք է ընդունվում այն ոլորտի ցուցանիշը, որտեղ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր ռիսկի միավորն առավելագույնն է:

6. Ոլորտային ռիսկի առավելագույն կշիռ է սահմանվում 90 միավորը:

Ոլորտային ռիսկի աղյուսակ

NN ը/կ	Ոլորտի անվանումը	Ոլորտային ռիսկը (միավոր)
1.	Խաղալիքներ	90
2.	Չափումների միասնականություն	89
3.	Ավտոգազալցակայանների շահագործման տեխնիկական անվտանգության կանոններ	88

4.	Ավտոմոբիլային և ավիացիոն բենզին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիք, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիք և մագուր	87
5.	Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազ	86
6.	Ծխախոտային արտադրատեսակներ, դրանց պատկանելիքներ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ և ծխախոտային արտադրատեսակների նմանակներ	85
7.	Օծանելիք և կոսմետիկ արտադրանք	84
8.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	83
9.	Ցեմենտներ	82
10.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	81
11.	Արտադրական կանեփ	80
12.	Ցածրավոլտ սարքավորում	79
13.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորում	78
14.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	77
15.	Էներգախնայող սարքերի էներգաարդյունավետություն	76
16.	Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառման սահմանափակում	75
17.	Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորում	74
18.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանք	73
19.	Մակերևութաակտիվ միջոցներ և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներ	72
20.	Թեթև արդյունաբերության արտադրանք	71
21.	Քիմիական արտադրանք	70
22.	Քսանյութեր, յուղեր և հատուկ հեղուկներ	69
23.	Սինթետիկ հումքով լաքեր և ներկեր	68

24.	Հանքային պարարտանյութեր	67
25.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում	66
26.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք	65
27.	Ջրոսաշրջային գործունեություն	64
28.	Փաթեթվածքի անվտանգություն	63
29.	Կահույքագործական արտադրանք	62
30.	Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված բնական այրվող գազ	61
31.	1000 Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատ	60
32.	Շինարարական ապակիներ	59
33.	Փոխադրման և (կամ) օգտագործման համար պատրաստված նավթ	58

7. Անհատական ռիսկը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշներ:

8. Անհատական ռիսկը գնահատելիս հաշվի են առնվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության վերլուծության արդյունքները՝ առավելագույնը 40 միավոր, և ստուգման արդյունքում ստուգաթերթով արձանագրված խախտումների համար սահմանված միավորների հանրագումարը՝ առավելագույնը 50 միավոր:

$$R_w = R_q + R_u$$

Որտեղ՝ R_w - անհատական ռիսկ,

R_q - տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերլուծության արդյունքում ձևավորված ռիսկ,

R_u - ստուգաթերթով արձանագրված խախտումների արդյունքում ձևավորված ռիսկ:

Տնտեսավարող սուբյեկտի գործունեության վերլուծություն

NN ը/կ	Ռիսկ առաջացնող գործոնները	Ցածր	Միջին	Բարձր
1.	Գործունեության իրականացման վայրերի թիվը	1 վայր - 1 միավոր	2 կամ 3 վայր - 3 միավոր	4 և ավելի վայր - 5 միավոր
2.	Ոլորտների քանակ	1 ոլորտ - 3 միավոր	2-ից 4 ոլորտ - 4 միավոր	5 և ավելի ոլորտ - 6 միավոր
3.	Դիմումների, բողոքների, գրությունների, հանձնարա- րականների քանակը վերջին մեկ տարում	0 - 0 միավոր	1 կամ 2 - 2 միավոր	3 և ավելի - 4 միավոր
4.	Խախտումների վերացմանն ուղղված գործողությունները	խախտում չունի - 0 միավոր	խախտումը վերացրել է - 4 միավոր	խախտումը չի վերացրել - 7 միավոր
5.	Ոլորտի ազդեցության աստիճանը սպառողների վրա	ցածր սպառման - 2 միավոր	միջին սպառման - 4 միավոր	լայն սպառման - 6 միավոր
6.	Տարիքային կազմ	19 և բարձր տարեկան - 3 միավոր	7-ից 18 տարեկան - 5 միավոր	մինչև 7 տարեկան - 7 միավոր
7.	Արտադրող երկիր	ԱՄՆ, Կանադա, Շվեյցարիա, Իսլանդիա, Միացյալ Թագավորություն, Նորվեգիա, Ավստրալիա, Ճապոնիա, Նոր Զելանդիա, ԵՄ անդամ պետություններ, Հարավային Կորեա - 1 միավոր	ԵԱՏՄ անդամ պետություններ - 3 միավոր	այլ պետություններ - 5 միավոր

9. Եթե ստուգման արդյունքում գնահատվող տնտեսավարող սուբյեկտը միաժամանակ բավարարում է ռիսկ առաջացնող գործոնի մի քանի պայմանի, ապա հիմք է ընդունվում այն գործոնը, որի միավորն առավելագույնն է:

10. Եթե ռիսկ առաջացնող գործոնը չի առնչվում տնտեսավարող սուբյեկտի գործունեությանը, ապա հիմք է ընունվում ռիսկ առաջացնող գործոնի նվազագույն միավորը:

11. Եթե ռիսկ առաջացնող գործոնի գնահատման համար անհրաժեշտ տվյալները բացակայում են, ապա հիմք է ընդունում ռիսկ առաջացնող գործոնի միջին միավորը:

12. Տեսչական մարմնի կողմից մեկ տարվա ընթացքում նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկից ավելի ստուգում իրականացնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտների ռիսկի գնահատման համար հիմք է ընդունվում այդ տարվա ընթացքում հաշվարկված առավելագույն ընդհանուր ռիսկը:

13. Մինչև նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկից ավելի ոլորտում ստուգում իրականացնելիս ընդհանուր ռիսկը հաշվարկվում է յուրաքանչյուր ոլորտի մասով, և հիմք է ընդունվում հաշվարկված առավելագույն ընդհանուր ռիսկը:

14. Տեսչական մարմնի կողմից չստուգված տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր ռիսկը հաշվարկելիս ստուգաթերթ բաղադրիչին տրվում է այդ բաղադրիչի հնարավոր առավելագույն արժեքի 50%-ին համարժեք միավորը:

15. Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում (ըստ ռիսկայնության աստիճանի նվազման)՝

- 1) բարձր ռիսկայնության.
- 2) միջին ռիսկայնության.
- 3) ցածր ռիսկայնության:

16. Բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

17. Ցածր ռիսկայնության խմբում ընդգրկվում է ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև երեսուն տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի աճման:

18. Ռիսկի գնահատման արդյունքում հավասար միավորներ ստացած տնտեսավարող սուբյեկտները չեն կարող ընդգրկվել ռիսկայնության տարբեր խմբերում: Տվյալ դեպքում հավասար միավորներ ունեցող բոլոր տնտեսավարողներն ընդգրկվում են նվազ ռիսկայնության խմբում:

IV. ՌԻՍԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՆ

19. Տեսչական մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում (ստացվում) է տեսչական մարմնի կանոնադրական գործառնությունների իրականացման արդյունքում առկա տեղեկատվությունից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից իրենց տվյալների փոփոխման արդյունքում տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից:

20. Տվյալների բազայի նպատակն է որոշել և դասակարգել տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ առկա տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա:

21. Տվյալների բազան պարբերաբար թարմացվում, լրացվում և ծառայում է տեսչական մարմնի կողմից ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգի նպատակներին:

22. Տեսչական մարմնի կողմից չստուգված տնտեսավարող սուբյեկտներից տվյալների բազա է ընդգրկվում ՀՀ տարածք ոչ պարենային արտադրանք ներմուծող տնտեսավարող սուբյեկտների առնվազն 30 տոկոսը՝ ըստ ներմուծման (յուրաքանչյուր ոլորտի մասով) ծավալների նվազման:

23. Սույն որոշմամբ սահմանված ոլորտային ռիսկի աղյուսակում փոփոխությունների իրականացման պարագայում՝ կատարված փոփոխություններին համապատասխան, տվյալների բազայում առկա բոլոր տնտեսավարող սուբյեկտների ոլորտային ռիսկը վերագնահատվում է:

24. Տվյալների բազայից դուրս են հանվում (չեն ընդգրկվում) այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք՝

1) լուծարված են կամ հաշվառումից հանված.

2) գործունեություն են իրականացնում տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա ոլորտներից դուրս.

3) ներմուծել են ոչ պարենային արտադրանք՝ ոչ շուկայանահման նպատակով.

4) ընդգրկված են եղել տվյալների բազա, սակայն ընդգրկման համար հիմք հանդիսացող տվյալներն արդիական չեն:

25. Տվյալների բազան էլեկտրոնային աղյուսակ է, որը ներառում է տեղեկատվություն տեսչական մարմնի վերահսկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ: Տվյալների բազան բաղկացած է տողերից և սյուներից: Յուրաքանչյուր տող պարունակում է առնվազն հետևյալ տվյալները՝

1) տնտեսավարող սուբյեկտի անվանումը և կազմակերպչի րավական ձևը.

2) հարկ վճարողի հաշվառման համարը.

3) տնտեսավարող սուբյեկտի գնահատված ընդհանուր ռիսկի միավորը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ